ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

№ 4/1255
«27» 07 2012թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի իրավաբան
պարոն Գևորգ Հայրապետյանին
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի պարոն Հայրապետյան

Տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված 2012 թվականի հունիսի 23-ի թիվ 175-ի 3 թվակիր գրության 1-ին և 2-րդ կետերին ՀՀ արդարադատության նախարարությունը արդեն իսկ պատասխանել է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ին իր՝ 2012 թվականի հուլիսի 9-ի 01/4017-12 թվակիր գրությամբ:

Հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» և «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջները՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության աշխատակիցները 2011 թվականի ընթացքում արժանացել են խրախուսանքների միանվագ դրամական պարգևատրումների տեսքով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության աշխատակիցները, բացի դրամական պարգևատրումներից, որևէ այլ պարգևատրում (նվեր) չեն ստացել:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության

0078 Երևան, Հալաբյան 41/ա
Հեռ.՝ 380250. E-mail: nune@justice.am

գործակալության աշխատակիցների դրամական պարգևատրումների չափի մասին տեղեկատվությանը, տեղեկացնում ենք, որ նման տեղեկատվություն իրավասու չենք տրամադրել՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջները:

Հարկ ենք համարում նշել, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի սույն թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո հիշյալ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գույքի և եկամուտների հայտարարագրերի ներկայացնելու պարտականությունը դրված է բարձրաստիճան պաշտոնատար անձանց վրա:

Հետևաբար, այդ տեղեկությունները հանրության համար այսուհետ մատչելի են միայն հիշյալ բարձրաստիճան անձանց միջոցով:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալությունից նման տեղեկատվություն պահանջելը չի բխում վերը նշված իրավական ակտերի պահանջներից, ուստի Ձեր կողմից հայցվող տեղեկատվությունը չենք կարող ներկայացնել:

Հարգանքով՝ **Ն. Խաչատրյան**